Մեղք որ երկիր եմ թագուցեր.
Բեռն եւ չալակ ծանրանալու,
Ո(ր)պ(էս) կապար էծանրագոյն.
Զինչ ժողովեն զինքն ի հողու:

Անուն բարի կոչեն յերկրի.
Թէ չէ նախնոյն ա(ստուա)ծայնու,
Բարի անուն կոչելն է չար.
Ով բարձրանա առջեւ մարդու:

Վկայ բերեմ զաւետարանն.
Որ քարոզէ յամէն ժամու,
Որ բարձրէ առ(ա)ջի մ(ա)րդկ(ա)ն.
Պիղծ է առաջին աստուծու:

Հանց եղէ ես սուտ կեղծաւոր.
Որ եմ նման փարիսեցու,
Գործով խաւար եմ զայրացեալ.
Բանիւ թըւիմ մ(ա)րդկ(ա)ն հաճու:

Արաբացի գա(յ)լու նման,
Սպիտակ բրդով նման մաքու,
Ներքոյ եմ գայլ յափշտակող.
Ճանկ եւ ըղունկ ք(ա)ն զարծըլու:

Երբ Գաբրիէլ փողն գոչէ.
Յառնեն մեռեալք յայսըմ հողոյ.
Ժ(ո)ղ(ո)վէ զամէն տարերք.
Ի ցամաքէ եւ ի ծովու:

Հանին յանցեղ մեծ հրապարակ.
Որ կարկամի ամէն լեզու,
Վախեն յահեղ դ(ա)տ(ա)ստ(ա)նէն.
Զի շատ համար ունին տալու:

Ինձ ամ(ենայն) զիրք վկայեն.
Կրկին ածեն զիս յամօթու,
Զիրկու թափուր մնամ դատարկ.
Երբ ամէն ոք զիւր պարտքն առնու: